

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ

ՔԱՂԱՔԱԿԱՆՔ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ՝

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՉՈՒԱՅ




Մզգային ուսումնարանաց մէջ իրաւամբ առաջին տեղին ունի ըստ բազում գլխոց Մոսքուայի ձեմարանը՝ անմահ յիշատակ Լազարեան տոհմին, եւ աղբիւր կանոնաւոր կրթութեան եւ ուսման բազմաց իշայոց Ռուսաստանի. ուստի եւ անհրաժեշտ պարտք է մերազնեայց՝ դիտել եւ իմանալ միշտ նորա յառաջադիմութեան ընթացքը, միանգամայն եւ բանիւ եւ գործով գործակից լինել՝ եթէ հարկն պահանջէ՝ պայծառութեան նորին :

Սյուսի համոզմամբ մտաց մեծ ուշադրութեան արժանի կհամարիմք այն տեղեկութիւնն եւս՝ զոր կուտայ ամէն տարի ձեմարանին մեծարգոյ Վերատեսուչ Պարոն Նեվերովը առանձին տպագրեալ տետրակներով. եւ այս տարուանին մէջ յայտնապէս կերելի ոչ միայն ձեմարանին այժմու գովելի վիճակը, այլ եւ անոր մեծանուն Վերատեսչին իւր պաշտօնին ինչ աստիճանի քաջայարմար լինելը. վասն որոյ եւ սիրով կթարգմանեմք եւ կտպագրեմք զայն այս տեղ գրոց լեզուաւ :

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՅԱՂԱԳՍ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

Ի 1862—63 ՈՒՍՈՒՄ ՆԱԿԱՆ ԱՄԻ



Մեծարոյ Տեարփ :

Լազարեանս ձեմարան յանցելումն ուսումնական ամի անդորր խաղաղութեամբ ի գործ էարկ զհիմնական կարգադրութիւնսն զայնոսիկ՝ որք կարեւոր դատեալք էին ի պահպանութիւն ներքին կենդանութեան սորին : Ոչ մի ինչ առնելով փոփոխութիւն իկազմութեան իւրում, եւ ոչ իթիւս պաշտօնէից տեսչութեան իւրոյ, առաւել եւս յաջողութեամբ մարթացաւ միտ դնել առտնին բարեկարգութեան իւրում, եւ այս բարեկարգութիւն ըստ բաւականին հաստարմատ ամրացեալ թուի առ իբերելոյ զակընկալեալն արգասիս բարեաց :

Խորհրդարան ձեմարանին, որ յառաջն պաշտօնական իմն արարողութեամբ եւեթ հաղորդ լինէր ուսումնական եւ բարոյական տեսչութեան սորին, ուր ուրեմն դարձաւ յարդիւնական գործադրութիւն. քանզի ոչ միայն ամիս յամսոյ գումարէր իժողով ըստ կարգի, այլ եւ մեծապէս փութաջան երեւէր իկատարումն ամենայնի որ ինչ անկ է յառաջադէմ զարգացման ուսումնարանիս : Իտասնեակ գումարմունս նորին, բաց խովորական գործոց որք առօրեայքն կոչին՝ ի քնին առան առաջիկայ խնդիրքդ .

Իհերուն հետէ յօրինեալ էր Խորհրդարանն զնախագիծ կարգադրութեան Հոգեւորական Բաժնին. այլ քանզի իգործադրութեան նորին ընդ առաջ ելեալ էին ոչ սակաւ դժուարութիւնք, չհաստատեցաւ այն իհոգաբարձուէն. որ եւ ասաց թէ ցանկալի է նմա զի վերատեսուչ ձեմարանիս իմիասին ընդ կրօնուսոյց վարժապետի Հայկական

գաւանութեան՝ ընդ Մսերի Գ. Մսերեանց, առանց այլափոխելոյ հաստատուն կարգաց ուսումնարանին՝ խնդրեալ գտցէ զհնարս դասախօսելոյ աշակերտաց Հոգեւորական Բաժնին կանոնաւոր եւ հաստատուն եղանակաւ զայնոսիկ յուսանելեաց, որք կարեւորք են անշուշտ իպատրաստել զնոսա առ հանդերձեալ կոչումն նոցին, այսինքն է իսպասաւորութիւն Եկեղեցւոյ : Յաղագս որոյ Մագիստրոսն Մսերեանց խորհրդակցութեամբ վերատեսչին յօրենեաց զայսմանէ առանձինըն ինչ գրուած, որ իչորս մարտի տարւոյս քննեալ իԽորհրդարանին եւ ուրեք ուրեք լրացուցեալ հաստատեցաւ, եւ սահմանեցաւ այսպէս .

Դասախօսութիւն ուսանելեացն կարեւորաց վասն աշակերտաց որք պատրաստին յեկեղեցական կոչումն, սկսցի իհինգերորդ դասարանէ վարժարանին եւ աւարտեսցի ի Լիկէոնի դասարանսն :

Այսր աղագաւ զեկեղեցական աշակերտս ե եւ Զ դասարանաց իմի վայր գումարել յունկնդրութիւն դասուց առանձին ուսանելեաց, սահմանելով առ այն երկուս դասս յեթնեկի, բաց ի հասարակաց դասուց զորս պարտին առնուլ ընդ աշակերտս դասարանացն այնոցիկ :

Եկեղեցական աշակերտք ե եւ Զ դասուց ուսանին զկրօնագիտութիւն ըստ առաջիկայ օրինակիդ . ի ե դասարանին զեկեղեցական պատմութիւն ընդհանուր եւ ի Զ զպատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ եւ զայլոց ամուլակցաց նորին . իսկ երկօրին լրացուցիչ դասախօսութիւնքն զորոց իվեր այսր ասա-

ցաւ, եւ որք յառանձին ժամս լինին, սահմանեալք են ի պարզախօս բացատրութիւն Գրոց սրբոց, ի Մեկնութիւն պատարագի եւ եկեղեցական արարողութեանց, սովորութեանց եւ այլն:

Եկեղեցական աշակերտքն որք ունինգիր լինին լրացուցիչ դասախօսութեանցս այսոցիկ, պարտին ի գրի հարկանել զոր ինչ լուսանն, եւ ի միւսում դասուն առաջի առնել վարժապետի, զի ուղղեսցէ եւ մեկնաբանեսցէ զայն ինչ՝ զոր ի բաց թողեալ եւ կամ ոչ քաջ իմացեալ իցեն:

Յաւարտ վարժարանական ընթացից ուսման՝ եկեղեցական աշակերտքն անցանեն ի դասարանս Լիկէոնի, եւ անդ ըստ առաջնումն լսեն զբացատրութիւն Աստուածաշունչ գրոց, զՄեկնութիւն պատարագի եւ զընդհանուր եկեղեցական պատմութիւն՝ հանգերձ դասուք տեսական Աստուածաբանութեան, ըստ կանոնաց դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ:

Ընդ ամենայն ժամանակն յորում եկեղեցական աշակերտքն գտանիցին ի հինգերորդին եւ ի վեցերորդի եւ ի դասարանս Լիկէոնի, պարտականք են յաւուրս կիւրակէից եւ մեծահանդէս տօնից սպասաւորել յեկեղեցւոջ՝ ի դասի կալով, եւ ընթեռնուլ կարգաւ զընթերցուածս մարգարէից եւ զթուղթըս առաքելոց, զորս եւ կրօնուսոյցն յառաջագոյն մեկնաբանէ նոցա:

Կրօնուսոյցն կարէ հրահանգել զեկեղեցական աշակերտս եւ ի շարագրութիւն եւ ի թարգմանութիւն քարոզից:

Եկեղեցական աշակերտքն պարտին ուսանել, ոչ ինչ ընդհատ յայլոց աշակերտաց՝ զամենայն ուսանելիս նշանակեալս ի 46 յօդուածի Սահմանաց ձեմարանիս, այսինքն զհանրական ընթացս ուսման վարժարանաց, ի բաց թողլով զօրէնսգիտութիւն եւ զվաղեմի լեզուս:

Եւ քանզի զարգիս երեքտասան եւեթ աշակերտք եկեղեցականք գտանին յուսումնարանիս. (իլրումն պահասութեան թուոյ նոցին փոխանակեն զպարապոյ տեղիսն հայկազն մանկունք որք ոչ են կարգեալ ի կուչումն եկեղեցական), յորոց ի հինգերորդ դասարանին է 1, իսկ այլքն են ի ստորնագոյն դասարանս, սմին իրի անմարթ է ըզկարգագրութիւնսն ի վեր այսր յիշատակեալըս ի սկոյն դնել ի գործ. բայց զի մի յապաղեսցէ այլ եւս բարեկարգութիւն Հոգեւորական Բաժնին՝ սահմանեցաւ զի առ ինչոյն եկեղեցական աշակերտաց ի 2 դասարանին, յայսմ ուսումնական տարւոջ աշակերտք Գ եւ Ե դասարանին միասցին ի դասախօսութիւն եկեղեցական ուսանելեաց ի մի դասարան, կարգելով առ այն մի դաս եւեթ յեօթնեկի. իսկ յառաջիկայ ուսումնական ամի կարգագրութիւնս այս առցէ զլիուլի կատարումն:

Սակս այսր լրացուցիչ դասու սահմանել ժամանակ յերկուշաբաթի աւուրս զինի ճաշուն ի վեց ժամէ մինչեւ ց<sup>7</sup>/<sub>4</sub>:

Միանգամայն եւ զայս ինչ յայտնեաց Խորհրդարանն կրօնուսոյց Մագիստրոսին Մըսերեանց, եթէ ցանկալի է զի դասախօսութիւն աստուածաբանական ուսանելեաց առ եկեղեցական աշակերտս, որպէս եւ շարագրութիւնքն նոցին, լինիցին ի հասարակ ուսմական բարբառ Հայոց, եւ ոչ ի հայկականն (եկեղեցական) լեզու. իսկ եթէ կրօնուսոյցն կարեւոր ճանաչիցէ հրահանգել զաշակերտս ի հայկաբանութեան, առ այս պարտի ընտրել առանձինն ժամանակ՝ որիչի դասախօսութենէ աստուածաբանական ուսանելեաց:

Ըստ այսմ կարգագրութեան Խորհրդարանին, յառաջնոց աւուրց անտի մարտի սկիզբն եղեւ պատրաստութեան եկեղեցական աշակերտաց առ հանգերձեալ կոչումն նոցա. եւ առ իտալոյ նոցա զոյգ ընդ աշակեր-

տաց ուսու դաւանութեան իպարապոյ ժամանակս զհոգեպարարն կերակուր՝ տալ բերել զեկեղեցական օրագիր մի իլեզու Ռուսաց, (ընդունիմք զՌուդրափոստակսն *Скютарիւն Православное Обозрѣніе*), եւ գնել զամբողջ հաւարումն գրուածոց Հարցն Սրբոց ըստ ուսութարգմանութեան:

Երկրորդ երեւելի կարգադրութիւն Խորհրդարանի ձեմարանիս եղև բարձումն այնր ոճոյ քննութեան սահմանելոյ իփոխադրութիւն աշակերտաց՝ որ կայրն մինչեւ ցայժրմ: Իպատճառս վաղնջուցն եղանակի տարեկան քննութեանց ամսօրեայ ժամանակ եւ աւելի պակասէր յամին յուսումնական ժամանակէն. եւ ոչ այնչափ իտուգել ըզգիտութիւն աշակերտացն լինէր այն պիտանի, որչափ իհաւաստել զյեղանակ դասախօսելոյ վարժապետաց, որք եւ այսր աղագաւ ջանային իհարկէ զաշակերտս իւրեանց լաւագոյնս երեւեցուցանել. իսկ եւ ուսանողքն ակն ունելով թէ գտցեն զայն յաջողութիւն՝ որ բազում անգամ յառաջ գայ բոլորովին յօտարոտի հանգամանաց, յընթացս տարւոյն ոչ մտադիւրութեամբ պարապէին յուսումն, այլ միով միայն կամ երկու ամօք յառաջ քան զքննութիւնն գային զնովաւ. որոյ վասն եթէ հմտանային եւս ինչ ինչ իրաց, հարեւանցի իմն էր այն եւ դիւրամուտաց ուսումն, որպէս եւ է իսկ ամենայն ինչ զոր ուսանիցի ոք յիշողութեամբ եւեթ՝ առանց իվար արկանելոյ զայլս իմտաւորական կարողութեանց: Իսկ հսկողութիւնն իվերայ դասախօսութեանց յայնժամ եւեթ հասանէ իւրումն նպատակի, յորժամ իգործ գնիցի՝ հանապազ զակն իվերայ ունելով ընթացից դասախօսութեանքն, եւ ոչ թէ քննութեամբ միայն: Այլ առ իտուգելոյ զհմտութիւն ուսանողացն՝ վարժապետ որ խղճի մտօք կատարիցէ զպարտս իւր՝ ճանաչէ զաշակերտսն եւ առանց իսկ քննութեանց. ճանաչէ զնոսա նոյնպէս եւ վերատեսուչն եւ Տեսուչ՝ եթէ միտ գնիցեն

դասախօսութեան: — Սմին իրի Խորհրդարանն հաւանեալ գոլով եթէ առ իյորդորելոյ զաշակերտս իկանոնաւոր եւ յանդուլ աշխատութիւն՝ հարկ է տալ նոցա իմիտ առնուլ զի ոչ թէ պատրաստութիւնն իքննութիւն, այլ հանապազորդ պարապումն յընթացս տարւոյն արգոյ է յաչս վարժապետաց եւ դաստիարակաց նոցա, եւ թէ ըստ այնմ եւեթ բարձրանան դասարանէ իդասարան, սահմանեաց զի աշակերտք որ միջին թուով ընկալեալ իցեն յոր եւ իցէ ուսանելիս զնշանակս 3, փոխադրին ըստ այնմ ուսման առանց քննութեան. իսկ որք առեալ իցեն զնշանակս 4, կարեն նոյնպէս փոխադրիլ առանց քննութեան՝ եթէ հաւանեցի ընդ այն վարժապետսն այնր ուսման. յետ այնորիկ որք ունիցին զնշանակս 1 ի միում ուսման, կամ թէ իմեծի մասին ուսանելեաց ոչ աւելի քան զ2, բնաւ իսկ ոչ մատուցանին իքննութիւն, այլ թողեալ լինին ինմին դասարանի:

Եւ քանզի իվերայ դասախօսութեանց կրօնադիտութեան՝ բաց իտեղական պաշտօնատեարց հսկէ եւ եկեղեցականն իշխանութիւն, որ առաւելապէս իքննութեանց անտի կարող է դատաստան առնել՝ թէ յորում աստիճանի դատանիցի կրօնական ուսումն իձեմարանիս, վասն այսորիկ սահմանեցաւ զի կրօնադիտութիւնն արտաքոյ մընասցէ այսմ կարգադրութեան. այսինքն է զի ամենայն ուսանողք, եթէ յառաջադէմքն եւ եթէ յետամնացք, պարտին որպէս յառաջ՝ անկանել ընդ քննութեամբ կրօնադիտութեան: Այսու փոփոխութեամբ՝ ժամանակն որ ծախէր իքննութիւն՝ յայսմ ամի համառօտեցաւ երկողքումբք եւ աւելի եօթնեկօք, իհաշիւ արկանելով եւ զնախընթաց պարապոյ աւուրս որ ծախին իպատրաստութիւն. այսինքն շահեցաւ զաւուրս իբր 16 վասն դասախօսութեան. բաց յայնմանէ յայտնի եղեւ զի մարթ է աւելի ինչ ժամանակ սահմանել իքննութիւն միոյ միոյ աշակեր.

տի, ուստի եւ քննութիւնքն առաւել եւս մտադրութեամբ արարան: Միանգամայն առաւելաւ խստութիւն քննութեանց իվերայ շարագրածոց, եւ պահանջեցան գրաւոր պատասխանիք անպատճառ իվերայ ուսու հայկական լեզուաց, ապա եւ իվերայ միոյ իրիք յուսանելեաց, իկամս աշակերտին թողլով զընտրութիւն նորին: Հանգերձ այսու սահմանեաց Խորհրդարանն՝ զի ամենայն կարգադրութիւնք իւր որ յաղագս քննութեանց եւ քաղուածոց՝ հաւաքեսցին, եւ ըստ օրինի շարակարգեսցին. զոր եւ կատարեաց կրտսեր ուսուցիչն Ռուսաց լեզուի Վ. Ա. Պեւեայեւ: Յորժամ այս աշխատութիւն քննեսցի ի Խորհրդարանին եւ լրացուցի եւ ուղղագրեսցի, պարտի հրատարակիլ տպագրութեամբ յառանձինն տետրակս իպէտս ուսուցչաց եւ ուսանողաց:

Առանձինն մտադրութիւն եղեւ իվերայ դասախօսութեան լեզուին Ռուսաց իձեմարանիս. քանզի աշակերտքն մեծաւ մասամբ մտանեն իձեմարանս ոչ միայն թերակատար տեղեկութեամբք, այլ եւ ոմանք քնաւ իսկ ոչ գիտելով եւ ոչ զմի բառ Ռուսաց: Աշակերտք Գ դասարանի ինքնին իսկ խնդրեսցին իձեռն Տեսչին՝ յաւելուլ նոցա դաս մի ըստ այսմ լեզուի, որպէս եւ եղեւն:

Առ իվարժելոյ զմանկունս նախակրթարանին իխօսել գիւրբիմաց եղանակաւ իուսու լեզու, զոր թէ չառնիցեն՝ անկարանան իմանալ եւ զայլ դասախօսութիւնս, Տեսուչն արար զայս գիտողութիւն, թէ հարկ է անպատճառ ուսուցչին Ռուսաց լեզուի ինախակրթարանի անդ՝ տեղեկանալ լաւագունիցն եւ նորագունից յոճս նախնական գատիարակութեան. վասն որոյ եւ Խորհրդարանն աղաչեաց զՎերատեսուչ ձեմարանիս բանագնաց լինել ընդ վերստեսչին դպրոցաց Մոսքուայի, եւ ընդունել ինմանէ ըզհրաման՝ զի ուսուցիչն նախակրթարանի ձեմարանիս երթեալ տեսցէ զընտրելագոյն

դպրոցս Մոսքուայի, եւ հմտացի զանազան եղանակաց նախնական կրթութեան, — որպէս եւ արտարաւն իսկ:

Եւ ոչ միայն Ռուսացն լեզուի դասախօսութիւն ընդարձակեցաւ, այլ եւ դաս մի յաւելաւ Աշխարհագրութեան Ռուսաց ի եգասարանին. իսկ առ բան վարժապետաց արեւելեան լեզուաց՝ թէ յառաջագիմութիւն սակաւ ունին աշակերտքն յարեւելեան գեղագրութեան, Պ. Տեսուչն արար պատասխանի, զի թէպէտեւ յուսման անդ արեւելեան լեզուաց կարեւոր է յոյժ եւ գեղագրութիւն նոցին, սակայն չէ մարթ յաւելուլ զթիւ դասառութեանց գեղագրութեան իգասարանս վարժարանական ուսմանց, ապա թէ ոչ, վնաս է եւ կորուստ այլոց կարեւորագոյն եւս ուսանելեաց. այլ հարկ է փոխաբերել զգասառութիւնն զայն յառանձին գասարանս՝ ուր եւ յառաջն գտանէր: Հաւանեալ Խորհրդարանին ընդ կարծիս Տեսչին՝ սահմանեաց յառանձին գասարանսն երկուս դասս արեւելեայ գեղագրութեան: — Իպատճառս դասարանացն այնոցիկ վերստին իմէջ բերաւ խնդիրն եթէ արդեօք անհրաժեշտ հարկաւ կարեւոր իցէ ուսանողացն զարեւելեան լեզուս ուսումն լատին բարբառոյ: Անգըստին ի 1839 ամէ հետէ Տեսուչն այնր ժամանակի, որ զարդիս վարժապետն է հայկաբանութեան, Մ. Յ. Էմին, առաջի արար Խորհրդարանին զխնդիրս զայս, եւ ըստ նորա բանիցն առաջարկեաց Խորհրդարանս Հոգաբարձուի ձեմարանիս զի եւ լատին լեզուին ուսումն համարեսցի իթիւս հրահանգաց զորս պարտին ուսանել պատանիքն հետամուտք արեւելեան լեզուաց. քանզի եւ գըլխաւոր գործիք հրահանգացն այնոցիկ, եւ մանաւանդ բառարանքն, իլատին լեզու շարագրեալք են, եւ կամ էր սկիզբն առնել այնմ ուսման յԳ դասարանէն: Բայց յայնժամ Հոգաբարձուն ոչ իդէպ համարեցաւ հաւանել ընդ այն առաջարկութիւն, քանզի առաջի կայր եւ հանրական վերագնութիւն

ուսումնական մասին ձեմարանիս : Եւ զի այ-  
 Ժրմ եւս ոչ է մարթ ձեռն արկանել ինոյն  
 այսու աղագաւ՝ զի դասախօսութիւն վար-  
 Ժարանական ուսմանց ձեմարանիս պարտի  
 համաձայնել առ հասարակ ընդ դասախօ-  
 սութեան այլոցն վարժարանաց, եւ ոստիկա-  
 նարանն ազգայնոյ լուսաւորութեան չեւ եւս  
 տուեալ է զվերջին վճիռ իւր առ խնդիրն  
 կերպարանափոխ առնելոյ զմիջին եւ զսո-  
 րին ուսումնարանս, սմին իրի եւ խնդիրն  
 զլատին լեզուէ վասն աշակերտաց լիկէո-  
 նական դասուց ձեմարանիս՝ մնայ յանորիշ  
 պայմանի . բայց Խորհրդարանն կարեւոր դա-  
 տեցաւ զի գէթ գաղղիարէնն բարբառ, որ  
 մինչեւ ցայժմ՝ դասախօսեալ լինէր առանձ-  
 նաբար յառանձինն դասարանս, ծանիցի իբ-  
 րեւ կարեւոր յուսումն աշակերտաց . քանզի  
 անմարթ է յաջողակի պարապել յուսումն  
 արեւելեան լեզուաց առանց օժանդակու-  
 թեան՝ թէ ոչ լատինականին, գէթ միոյ  
 յարդի լեզուացն եւրոպացուց :

Նովին իսկ պատճառաւ, այսինքն է սպասե-  
 լով հանդերձեալ փոփոխութեան ուսումնա-  
 կան մասանց վարժարանական դասատանց  
 ձեմարանիս, — Խորհրդարանն կասեցաւ ի  
 կատարելոյ զառաջարկ վերատեսչին, որ  
 խորհէր թէ պարտ է հայցել եւ վասն ձե-  
 մարանիս զնոյն գիւրութիւն իպէտս ուսանո-  
 զաց լատին լեզուի, որ ըստ այժմու կանոնի  
 վարժարանաց ընծայի այնոցիկ իպատանեաց  
 որք պատրաստին մտանել ի Համալսարան,  
 այսինքն զազատութիւն ի դասուց Օրէնսդի-  
 տութեան, որպէս զի գիւրագոյնս մարթաս-  
 ցին աշխատել յուսումն կարեւորագունին  
 ինքեանց լատին բարբառոյ :

Այսոքիկ են աւասիկ գլխաւորագոյնքն ի  
 խնդիրս որոց միտ եգ Խորհրդարան ձեմա-  
 րանիս յանցելումն ուսումնական ամի : Բաց  
 յայսցանէ յակն էարկ եւ գովեաց զգասա-  
 տետրն Գերմանական լեզուի՝ զշարագրեալն  
 ի Պարոն Ֆիտլէրէ, որ ուսուցիչ է գերմա-

նեբենին ի ձեմարանիս, եւս եւ զգաստետրն  
 լեզուին Թաթարաց՝ ըստ Ատրպատական բար-  
 բառոյ, որ եւ այն եւս շարագրած է ուսուց-  
 չի ձեմարանին՝ Մագիստրոսին Գ. է. Լազա-  
 րեվի : Ցաւէ մեզ զի վերջինս այս անտիպ  
 մնաց առ իչգոյէ ծախուց տպագրութեան :

Միտ դնելով բարոյական կրթութեան ա-  
 շակերտաց, Խորհրդարանն ի քնին էառ զայ-  
 նոսիկ իյանցուածոց նոցա՝ որոց վասն հար-  
 կաւոր էին առանձինն խրատք կամ պատիժք  
 եւ կարեւոր դատեցաւ զօրացուցանել զհսկո-  
 ղութիւնն ի վերայ աշակերտաց ի պարապոյ  
 Ժամանակին, սահմանելով զի փոխանակ միոյ  
 վերակացուի երկուք լիցին անպատճառ յօ-  
 րապահութեան :

Ի պատճառս հրաժարելոյ ուսուցչին Վրաց  
 բարբառոյ նաքաշիծէ ի շխանազնին, Խորհրդ-  
 դարանն խնդիր արար առ Աւագ քահանայն  
 Գուրգէնիծէ, որ երբեմն ուսուցիչ իսկ էր  
 այնր լեզուի, զի յանձն առնուցու գարձեալ  
 զնոյն պաշտօն . այլ ըստ ոչ բաղդի մերում  
 Գուրգէնիծէն սակս իւրոյ անձնական տկարու-  
 թեանն կամելով ելանել ի սպառ ի Մոսքուայէ  
 եւ ի հայրենիսն գառնալ, — շնորհս կալաւ  
 Խորհրդարանին սակս մտադրութեանն եղելոյ  
 առնա, եւ հրաժարեաց յառաջարկէ անտի-  
 որով եւ բարբառն այն առ Ժամս կայ մնայ  
 առանց ուսուցչի, բայց արգէն լեալ է կար-  
 գագրութիւնն կարեւոր՝ զի իսկզբան առա-  
 ջիկայ ուսումնական տարւոյս եկեսցէ ուսու-  
 ցիչն այն :

Բաց ի նաքաշիծեայ զրկեցաւ ձեմարանս  
 եւ իմիոյ ուսուցչէ, որ զամս երիս վաստա-  
 կեալ էր յօգուտ սորին, նա ինքն է երիցա-  
 գոյն ուսուցիչ լեզուին Ռուսաց Ի. Թ. Կլե-  
 պով, որ ի պատճառս մատենագրական զբա-  
 ղանացն՝ հանդերձ դասատուութեամբ յայլ  
 եւ այլ ուսումնարանս՝ հարկեցաւ հրաժարել  
 ի ձեմարանէս : Իսկ ի տեղի նորա հրաւիրեցաւ  
 գասապեան (кандидатъ) Համալսարանի քաղա-


քիս Ի. Մ. Ժիվալիօ, որ եւ սկիզբն արար աշխատութեանց իւրոց ի ձեմարանիս իյու-նուարէ այսր տարւոյ :

Մատուցեալ յուսումնական նպաստս ձեմարանիս, յանցելումն ամի որոշեցաւ վասն ընագիտական Թանգարանի սորին յարմարագոյն եւս տեղի յառանձինն գահլծի պատրաստելոյ առ այն, ուր նոյնպէս եղեալ կան գրասեղանք եւ իպէսս ուսանողաց, — եւ ի գիւրութիւն փորձառական գործողութեանց՝ գասախօսութիւնք զընագիտութենէ լինին արգ ինմին իսկ Թանգարանի :

Մատենադարան ձեմարանիս՝ յորում ենն յ237 անուանք գրենոյ, ճոխացաւ 19 անուամբք նորոց մատենագրութեանց, մանաւանդ իմասին Ընդհանուր Պատմութեան, Մատենագրութեան եւ Արեւելեայ լեզուագիտութեան : Իսկ յաշակերտացն սեպհական գրատուն, յորում էին 200 հատորք, յաւելան այլ եւս հատորք 67 : Թող զայս, ի պէսս աշակերտաց բերեալ լինին եւ լրագիրք եւ օրագիրք ի Ռուսաց եւ ի Հայոց լեզուս՝ գիւրահասք մտաց եւ թիոց աշակերտաց, — որովք մեծապէս յորդորի ինոսա

ընթերցասիրութիւն, որոյ գեղեցիկ պտուղ է յառաջագէմ զարգացումն ուսումնական վարժից եւ ընդարձակումն մտաւորական կարողութեան հասարակաց. որ եւ յայտնապէս երեւի ի շարագրածս ըստ բաւականին գեղայարմարս ի վերայ խնդրոց տուելոց առ նոսա իռուս եւ ի հայ լեզուս : Ընտրելագոյնքն ի շարագրածոց անտի, ըստ կարգին սահմանելոյ ի հերուն, որոշէին ի վերծանութիւն յուսումնական զրուցատրութիւնսն որ լինէին յերկուս ամիսս միանգամ առաջի վերատեսչին, Տեսչին եւ վարժապետին Ռուսացն գպրութեան : Գործնական կրթութիւնք խօսակցութեան պարսկերէն լեզուի եղեն եւ յայսմ տարւոջ, առ որ հրաւիրէր ի բրեւ հրահանգիչ մի ոմն ի բնիկ Պարսկաց : Առ հասարակ, քանզի կէտ նպատակի ձեմարանիս է արեւելեանն լեզուագիտութիւն, — այսինչ եւեթ մնայ ցանկալի առ այս, զի կարգեսցի ի սմա առանձին գասարան կամ բեմ Պատմութեան Արեւելից, որ անշուշտ օգտաւէտ լիցի պատանեաց հետամուտ եղելոց ուսման լեզուաց եւ գպրութեան արեւելեան ազգաց :

(Աւարտն յառաջիկայս .)



Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն



Տարւոյս առաջին ամսոյն մէջ քաղաքական գիպուածոց մթնոլորտը շատ պղտոր երեւցաւ. եւ ինչպէս որ վաղուան օդը այս իրիկուրնէ կարելի է փոքր իշատէ գուշակել, այսպէս ալ փետրուարի ու մարտի մէջ պատահելու գիպուածները կրնային գուշակուիլ՝ յունուարի մէջ պատահածներէն :

— Գաղղիոյ օրէնագրական ժողովոյն մէջ

ազատական կողմին ձայնը այնչափ բարձրացաւ, մանաւանդ մեծանուն Թիէռլին ճարտասանութեամբը, որ մինչեւ նափուլէն կայսերական ջին ալ սաստիկ անախորժ եկաւ : Ազատականք իրենց գլխաւոր ճարտասաններուն բերնովը այս ալ կպահանջէին որ Գաղղիան օգնէ Լեհացւոց. բայց տէրութիւնը պատասխանեց թէ Գաղղիան իւր ձեռքէն